ՀՏԴ:929: 947.925 Տեր-Մինասյան + 809.198.1
Doi:10.54503/0135-0536-2025.1-283

ԵՐՎԱՆԴ ԳԱԼՈՒՍՏԻ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ
(Ծննդյան 145-ամյակի առթիվ)*

Երվանդ Տեր-Մինասյանը ծնվել է 1879 թ. նոյեմբերի 19-ին Արթիկի շրջանի Հառիճ գյուղում, Տեր Գալուստ քահանայի ընտանիքում: Տարրական կրթությունը ստացել է տեղի ծխական երկդասյան դպրոցում, որը բարձր առաջադիմությամբ ավարտել է 1892 թ.: Միևնույն տարում ընդունվել է Սբ. Էջմիածնի Գևորգյան ճեմարան, որտեղ աշակերտել է այնպիսի նշանավոր գիտնականների, ինչպես, օրինակ՝ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանցը, Մեսրոպ վրդ. Տեր-Մովսիսյանը, գրաբարագետ Մկրտիչ Պալյանը, ռուսագետ-բանաստեղծ Լևոն Մանվելյանը, պատմաբան-բանասեր Կարապետ Կոստանյանը, Կոմիտաս Վարդապետը և այլք:

1900 թ. Ե. Տեր-Մինասյանը գերազանցությամբ ավարտում է Գևորգյան ճեմարանը՝ որպես ավարտաճառ ներկայացնելով «Հաղբատ և Սանահին վանքերը և նրանց նշանակությունը Հայոց պատմության մեջ»: Այն, իբրև այդպիսին, այնքան հաջող էր շարադրված, որ ճեմարանի տեսչության միջնորդությամբ, ի խրախույս հեղինակի, 1901 թ. հրատարակվում է «Արարատ» ամսագրում՝ որպես օրինակելի աշխատանք: Նույն թվականին Ե. Տեր-Մինասյանը Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի բարձր տնօրինությամբ ձեռնադրվում է սարկավագ և ուսման մեկնում Գերմանիա: 1900–1904 թթ. սովորում է Լայպցիգի և Բեռլինի համալսարաններում, որտեղ նրան դասավանդում են ժամանակի նշանավոր գիտնականներից Հառնակը, Հառակը, Ցիմմերնը, Վունդտը, Լամպրեխտը, Էրմանը, Զախաուն և այլք: Նշված համալսարաններում նա խորամուխ է լինում քրիստոնեական Եկեղեցու դավանանքի պատմություն, արևելագիտություն, Հին Կտակարան, եբրայեցերեն, ասորերեն ու փիլիսոփայություն առարկաների ուսումնասիրության և յուրացման մեջ:

Դեռևս արտասահմանում սովորելու տարիներից՝ Ե. սարկավագ Տեր-Մինասյանը Գերմանիայից նյութեր էր ուղարկում «Արարատ»-ի խմբագրությանը: Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում 1901 թ. ամսագրում հրատարակած «Աստուածաբանութիւն և Կրօնների ընդհանուր պատմութիւն» հոդվածը: Հեղինակի գիտական մտածողությունը, քննադատական հայացքը, վերլուծական միտքը և խորը կշռադատությունը միանգամից աչքի են զարնում: Հոդվածում նա անդրադառնում է աստվածաբանության և կրոնների ընդհանուր պատմության դասավանդման շուրջ գերմանական մտավոր շրջանակներում գոյություն ունեցող տարաձայնություններին:

---

* *Ներկայացվել է 30. X. 2024 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:*

Նպատակ ունենալով իր ուսումը ծառայեցնել ազգային եկեղեցու շահերին և դրանով հանդերձ նպաստել հայագիտության զարգացմանը՝ Ե. սարկավագ Տեր-Մինասյանն ուսման ընթացքում որպես ավարտաճառի նյութ ընտրում է հայ-ասորական եկեղեցիների հարաբերությունները: 1904 թ. ավարտաճառն արդեն պատրաստ էր: Նույն թվականին Բեռլինի համալսարան է ներկայացնում «Հայ Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց Եկեղեցիների հետ մինչեւ Զ դարի վերջը» ուսումնասիրությունը, որը գնահատվում է գերազանց: Գերմանացի գիտնականները Ե. Տեր-Մինասյանին արժանացնում են փիլիսոփայության դոկտորի աստիճանի: Հիշյալ աշխատությունն այնուհետև նա ներկայացնում է Գիսենի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետ՝ աստվածաբանության լիցենցիատի գիտական աստիճան ստանալու նպատակով: Ֆակուլտետը, հաշվի առնելով աշխատության վերաբերյալ հնչած կարծիքները, առանց համապատասխան պարտադիր պաշտպանության նրան շնորհում է աստվածաբանության լիցենցիատի աստիճան:

1904 թ. Ե. Տեր-Մինասյանը վերադառնում է հայրենիք՝ իր հոգևոր ծննդավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Գերմանիայի նրա հաջողությունները մեծ արձագանք էին գտել Սբ. Էջմիածնում՝ հպարտության և ոգևորության ալիք բարձրացնելով յուրայինների շրջանակում: Հայրապետական բարձր տնօրինությամբ Ե. սարկավագ Տեր-Մինասյանը ուսուցիչ է նշանակվում Գևորգյան ճեմարանում, որտեղ դասավանդում է գերմաներեն, Ընդհանուր Եկեղեցու պատմություն, Կրոնների պատմություն, Հին հունական և միջնադարյան քրիստոնեական փիլիսոփայության պատմություն, Հին Կտակարանի աստվածաբանություն, Նոր Կտակարանի աստվածաբանություն, ինչպես նաև՝ Հայոց եկեղեցու պատմություն:

1904 թ. դեկտեմբերի 4-ին Խրիմյան Հայրիկի բարեհաճ տնօրինությամբ նա ձեռնադրվում է որպես կուսակրոն քահանա, իսկ 1905 թ. Մայր Աթոռի լուսաբարապետ Տ. Ղևոնդ եպս. Հովակիմյանի ձեռամբ նրան տրվում է վարդապետական մասնավոր աստիճան:

Երվանդ վարդապետ Տեր-Մինասյանը եկեղեցական ասպարեզում գործել է մինչև 1910 թ.: Հոգևորականի նրա գործունեությունը թեև կարճ ժամանակաշրջան է ընդգրկում, սակայն վերջինս կարողացել է նշանակալի ներդրում ունենալ Հայոց եկեղեցու գիտակրթական կյանքի զարգացման կարևոր գործում:

Ըստ այդմ՝ նրա էջմիածնական շրջանի գործունեությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի. առաջին շրջանն ընդգրկում է 1904–1907 թթ., երկրորդը՝ 1907–1910 թթ.:

Հայ Առաքելական եկեղեցու սահմանադրության նախագծի, ազգային դպրոցական ծրագրի և կանոնադրության մշակման նպատակով Ամենայն Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը 1906 թ. նախաձեռնում է ազգային-կենտրոնական ժողով գումարել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում: Այս նպատակի իրականացման և ժողովի աշխատանքների համակարգման համար հայրապետական տնօրինությամբ կազմվում է հատուկ կարգադրիչ հանձնաժողով, որի կազմում Մայր Աթոռի գիտնական վարդապետներից ընդգրկվում են Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը, Գարեգին վրդ. Հովսեփյանցը և Երվանդ վրդ. Տեր-Մինասյանը, իսկ աշխարհականներից՝ Հովհաննես Հովհաննիսյանը, Ստեփան Կանայանը, Մանուկ Աբեղյանը և Սիրական Տիգրանյանը: Սպասված ժողովը

գումարվում է 1906 թ. վերոհիշյալ իսկ վայրում: Սակայն ժողովականների գաղափարական հակասությունները թույլ չեն տալիս, որպեսզի այն իր բուն նպատակին ծառայի: Ժողովում առաջադրված կրթական ոլորտի բարեփոխության հարցն առաջնային կապվում էր Գևորգյան ճեմարանի հետ: Թեև ժողովը ձախողվեց, այնուամենայնիվ, մամուլում շարունակում էին հնչել կրթական բարեփոխումների անհրաժեշտության մասին կոչերը: Ե. վրդ. Տեր-Մինասյանը, ելնելով խնդրի արդիականությունից, «Արարատ»-ում հրապարակում է ճեմարանի բարեկարգության վերաբերյալ Կենտրոնական ժողովի պատվերով մանկավարժական խորհրդի կազմած ծրագիրը՝ լրացուցիչ իր առաջարկներով հանդերձ:

Ներկայացված ծրագիրը նպատակ էր հետապնդում «Ճեմարանը վերածել իսկական բարձրագույն դպրոցի՝ քառամեայ դասընթացքով և աստուածաբանական ու հայագիտական երկու բաժանմունքներով»: Ժողովը ղեկավարվել էր այն տրամաբանությամբ, որ անհրաժեշտ չէ աստվածաբանական առարկաների ուսումնասիրությունը պարտադրել այն ուսանողներին, ովքեր հոգևորական կամ աստվածաբան չէին դառնալու, և, ընդհակառակը, պետք չէր հայագիտական առարկաներով ծանրաբեռնել նրանց, ովքեր կամենում էին խորանալ աստվածաբանության մեջ:

1907–1910 թթ. Ե. վրդ. Տեր-Մինասյանը, ճեմարանում ուսուցչությանը զուգահեռ, կաթողիկոսական տնօրինությամբ ստանձնում է նաև Մայր Աթոռի տպարանի կառավարչի պաշտոնը՝ միաժամանակ վարելով «Արարատ» ամսագրի խմբագրի օգնականի պարտականությունը: Այստեղ ևս Երվանդ վարդապետը ձգտում է օգտակար լինել խմբագրության աշխատանքներին՝ հակառակ իր բազմազբաղության:

1907 թ. նրա և Գարեգին վրդ. Հովսեփյանցի նախաձեռնությամբ «Արարատ» ամսագրում հաջորդաբար լույս են տեսնում սոցիալական աստվածաբանության գերմանական դպրոցի հայտնի ներկայացուցիչ Ֆրիդրիխ Նաումանի (1860–1919) քարոզները հայերեն թարգմանությամբ:

Ամենայն հավանականությամբ, Երվանդ վարդապետն ու ընկերները Ֆ. Նաումանի քարոզների թարգմանությամբ նպատակադրվել էին գաղափարական այնպիսի մթնոլորտ ստեղծել, որը Հայոց եկեղեցուն կօգնեին հասարակական դիրքորոշում ձևավորել ժամանակի սոցիալական խնդիրների նկատմամբ:

1907 թ. Երվանդ վարդապետի եկեղեցագիտական գործունեությունը ընորոշվում է մի շատ կարևոր ձեռքբերումով, որը, հիրավի, հայտնագործություն էր քրիստոնեական աշխարհի, մանավանդ՝ եկեղեցու պատմություն և դավանանքի զարգացում հետազոտող մասնագետների համար: Նրա ուսուցիչ Կարապետ ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը Երևանի թեմակալութեան շրջանում՝ 1904 թ. դեկտեմբերին, Երևանի Սբ. Կաթողիկե եկեղեցում պահվող ձեռագրերից մեկում պատահաբար հայտնաբերել էր մի շատ կարևոր հայրաբանական աշխատություն: Խոսքը Լիոնի եպիսկոպոս Իրենիոս Լուգդունացու «Ցույց առաքելական քարոզութեանն» երկի մասին է, որը մինչ այդ կորած էր համարվում քրիստոնեական գրականության մեջ: Ինչպես Ե. Տեր-Մինասյանն է նկատում, Կ. ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը, լինելով բազմազբաղ, ժամանակ չէր գտել վերոհիշյալ գործի ձեռագիրը պատրաստել և թարգմանել գերմաներեն: Այդ տարին հարմար առիթ

էր երկուսի համար էլ՝ իրենց նվիրելու հիշյալ գործի գերմաներեն թարգմանության և հրատարակության աշխատանքին: Ե. վրդ. Տեր-Մինասյանն ու Կ. ծ. վրդ. Տեր-Մկրտչյանը կյանքի են կոչում Իրենիոսի վերոհիշյալ գործի հրատարակությունը. այն 1907 թ. տպագրվում է Ադոլֆ Հառնակի խմբագրությամբ լույս տեսնող "Texte und Untersuchengen Zur Geschichte der altchristlichen Literatur" ժողովածուում: Իրենիոսի գործի հրատարակությունը եվրոպական գիտնականների շրջանակներում մեծ հետաքրքրություն է առաջացնում՝ համբավի արժանացնելով նրա թարգմանիչներին և հրատարակիչներին, որոնք գերմանական գիտնականների շրջանակներում արդեն որոշակի ճանաչում էին վայելում: Նրանց աշխատասիրությամբ տպագրված վերոհիշյալ գործը 1908 թ. վերստին հրատարակվում է որպես վերանայված հրատարակություն:

Ե. վրդ. Տեր-Մինասյանի էջմիածնական գործունեության երկրորդ շրջանում մասնավորապես առանձնանում է 1908 թվականը: Գևորգյան ճեմարանի հարկից ներս նա ձեռնամուխ էր եղել իր դասավանդած առարկաների համար դասագրքեր պատրաստելու պատասխանատու և տքնաջան աշխատանքին: Այդ թվականին Մայր Աթոռի տպարանում լույս է տեսնում նրա կազմած «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» դասագրքի առաջին հատորը, որն ընդգրկում էր հին եկեղեցու շրջանի պատմությունը: Երվանդ վարդապետը ծրագրում էր նաև երկրորդ հատորի հրատարակությունը, որն ընդգրկելու էր քրիստոնեական եկեղեցու միջնադարյան և նոր շրջանի պատմությունները: Առաջաբանում վարդապետը գիտնականի բարեխղճությամբ նշում է, որ ողջ աշխատությունը քաղվածք է գերմանական գիտության լավագույն դասագրքերից ու մասնագիտական այլ աշխատանքներից: Դասագրքի կազմման համար հիմք են ծառայել ոչ միայն գերմանալեզու հայտնի տպագիր հրատարակությունները, այլև իր ուսուցչապետների անտիպ դասախոսությունները: Տեղին է նշել, որ մինչ օրս Երվանդ վարդապետի կազմած «Ընդհանուր եկեղեցական պատմութիւն» դասագիրքն օգտագործվում է Հայոց եկեղեցու հոգևոր կրթօջախներում:

1908 թ. հունվարի 29-ին Ե. վարդապետ Տեր-Մինասյանը Գևորգյան ճեմարանում կարդում է «Բաբելոնը և Սուրբ Գիրքը» վերտառությամբ դասախոսություն, որի ստեղծման համար հիմք էին ծառայել Գևորգյան ճեմարանում դասավանդած Ծննդոց Գրքի մեկնությունն, Հին Կտակարանի աստվածաբանություն առարկաները: Նույն թվականին նշված դասախոսությունը հոդվածի տեսքով հրատարակվում է «Արարատ» ամսագրի երրորդ համարում, որին նույն տարում հաջորդում է նաև առանձնատիպի հրատարակությունը՝ «Բաբելոն եւ Սուրբ Գիրք (յաւելուած Գիլգամէշի վէպի)» վերնագրով: Դասախոսությունը, հեղինակի իսկ ծանոթագրությամբ, հիմնականում քաղված էր իր ուսուցիչների՝ հայտնի արևելագետներ Ցիմմեռնի, Գունկելի և Վինկլերի աշխատություններից: Երվանդ վարդապետի այս աշխատության լույսընծայումը պայմանավորված էր նաև ժամանակի արևելագիտության մեջ տեղի ունեցող զարգացումներով: Դեռևս 1902 թ. Բեռլինի համալսարանի ասորագիտության հայտնի պրոֆեսոր Ֆրանց Հուլիոս Դելիչը "Babel und Bibel" վերնագրով մի դասախոսություն է կարդում, որի առաջ բերած հետաքրքրությունը պատճառ է դառնում, որպեսզի այն վերահրատարակվի երկու անգամ՝ 1903 և 1905 թթ.: Երվանդ վարդապետն ուշադիր հետևում էր տեղի ունեցող զարգացումներին՝ նախան-

ձախնդրորեն ձգտելով այդ քննարկումները ներմուծել հայագիտական շրջանակ: Ծանոթ լինելով Դելիչի արմատական մոտեցմանը՝ ուսուցիչների աշխատությունների հետևողությամբ նա իր ուսումնասիրությունը կառուցում է ավելի համեմատական տեսանկյունից՝ հանգամանորեն քննելով աշխարհաստեղծման բաբելական և իսրայելական առասպելների հարաբերակցությանն առնչվող խնդիրները:

1908 թ. Ե. վրդ. Տեր-Մինասյանը հայերենի է փոխադրում և հրատարակում իր դոկտորական ատենախոսությունը՝ «Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց Եկեղեցիների հետ հայկական և ասորական աղբիւրների համաձայն»: Աշխատությունը, ինչպես հեղինակն է նշում հայերեն հրատարակության առաջաբանում, «լոկ թարգմանություն չէ մեր գերմաներեն գրքից, այլ մեծ չափով ճոխացրած է և ընդարձակած»: Տեղին է նկատել, որ նախքան աշխատության ընդարձակ հայերեն վերահրատարակությունը, ինչպես նաև՝ դրանից հետո, նա պարբերաբար անդրադարձել է իր ուսումնասիրությանն առնչվող մի շարք խնդիրների: Ասվածը մասնավորապես վերաբերում է նրա հետևյալ աշխատություններին՝ «Այսպես կոչված Պարսից ժողովը» (1907), «Մանազկերտի 726-ի ժողովի վեց ասորի եպիսկոպոսները և Խոսրովիկ թարգմանչի հիշած երկու ասորական վանքերը» (1907), «Բաբգեն Կաթողիկոսի ժողովի թվականը և տեղը» (1908), «Կնիք Հաւատոյ» ժողովածուն և Հայոց եկեղեցու դավանաբանական դիրքը Զ և Է դարերում» (1921–1922), «Նեստորականությունը Հայաստանում» (1946), «Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» (1960): Նշված աշխատություններից առաջին երեքն ամփոփում են Ե. Տեր-Մինասյանի դոկտորական ատենախոսության որոշ առանցքային դրույթներ:

1908 թ. Երևանդ վարդապետի գիտական գործունեությունը նշանավորվում է մեկ այլ կարևոր քրիստոնեական հուշարձանի՝ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» հակաքաղկեդոնական երկի հրատարակությամբ: Այս գործը, ի դեպ, հունարեն բնագրով չի պահպանվել. գիտությանն առայժմ հայտնի են միայն ասորերեն և հայերեն թարգմանությունները: Ե. վրդ. Տեր-Մինասյանը Կ. ծ. վրդ. Տեր-Մկրտչյանի հետ ձեռնամուխ են լինում բնագրի պատրաստմանն ու հրատարակմանը: Բնագիրը հրատարակվում է 1908 թ. Մայր Աթոռի տպարանում՝ Սուքիաս արքեպս. Պարզյանցի դրամական օժանդակությամբ:

1908 թ. թեև գիտական խմաստով բեղուն էր Ե. վրդ. Տեր-Մինասյանի գործունեության համար, սակայն այն բեկումնային եղավ նրա հետագա գործունեության առումով՝ իբրև կուսակրոն եկեղեցական: Բանն այն է, որ Երևանդ վարդապետին խիստ մտահոգում էր Հայոց եկեղեցու բարեկարգության խնդիրը, ինչպես և տվյալ ժամանակաշրջանում գործող շատ հոգևորական և աշխարհական անձանց, ովքեր մեծ փափագ ունեին տեսնել եկեղեցին և նրա առաքելությունն ավելի արդյունավետ, ավելի ներգրավված հայրենի կյանքից ներս: «Արարատ» ամսագրում Երևանդ վարդապետը հաջորդաբար երկու հոդված է հրատարակում Հայոց եկեղեցու բարեկարգության վերաբերյալ՝ «Վերանորոգության կարիքը Հայոց Եկեղեցու համար» և «Հայոց Եկեղեցու վերանորոգության խնդիրը»: Հիշյալ քննարկումներում խոսքը վերաբերում է այն հարցին, թե Հայոց եկեղեցին արդյո՞ք կարիք ունի բարեկարգման, որի վերաբերյալ

մամուլում տարբեր առիթներով հրապարակումներով հանդես էին գալիս եկեղեցական, մտավորական և հասարակական տարբեր գործիչներ: Հոդվածներում նա այն միտքն է արտահայտում, թե մարդկային մտածողության մեջ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել, որի արդյունքում երևան են եկել եկեղեցու և կրոնի իրավունքը մերժող նոր տեսություններ: Այս իրավիճակում, ըստ նրա, եկեղեցին ու կրոնի ներկայացուցիչներն իրավունք չունեն հայեցողական դիրք գրավել և սպասել, թե ինչ կլինի. այլ պետք է սթափվեն ու մտածեն՝ ինչ է ակնկալում մարդկությունը կրոնից ու եկեղեցուց: Ե. վրդ. Տեր-Մինասյանը հռետորական հարցադրում է անում. արդյո՞ք եկեղեցին պետք է մնա իր ներկա դրությամբ, թե՞ պետք է նորովի ներկայանա աշխարհին ու մարդկությանը: Նա իր հրապարակումներում առաջարկում է մի շարք բարեփոխումներ իրականացնել Հայ Առաքելական եկեղեցում, մասնավորապես՝ եկեղեցական դավանանքի, պաշտամունքի և վարչական կազմակերպության բնագավառներում: Նրա հիմնական մոտեցումն այն էր, որ եկեղեցին երբևէ չի կապվել որևէ պատմական ժամանակաշրջանի հետ, այլ միշտ ընդառաջ գնալով ժամանակի մտավոր հոսանքներին՝ վերցրել է դրանցից լավագույնը՝ հարմարեցնելով այն իր աշխարհայացքին: Երվանդ վարդապետն իր տեսակետը հիմնավորում է հատկապես քրիստոնեության և նորպլատոնական փիլիսոփայության միջև նկատելի կապը մատնանշելու օրինակով՝ եկեղեցական իշխանությանն առաջարկելով քրիստոնեական ուսմունքը հասարակությանը ներկայացնել արդի աշխարհայացքի և փիլիսոփայության նորագույն նվաճումների հիման վրա: Պաշտամունքի վերաբերյալ էլ առաջարկ է անում փոխել ծեսի լեզուն՝ դրաբարի փոխարեն կիրառելով բոլորի համար հասկանալի աշխարհաբարը, որոշակի կրճատումներ անել ժամերգությունների մեջ, և դրանք ճոխացնել համապատասխան գեղեցիկ երգեցողությամբ: Նա շեշտում է նաև քարոզի կարևորությունը քրիստոնյայի կենցաղում՝ առաջարկելով դրան ավելի մեծ տեղ հատկացնել պաշտամունքային կյանքում և եկեղեցու հովվական առաքելությունից ներս:

Երվանդ վարդապետի վերոնշյալ հոդվածներն աղմուկ են հարուցում նրա անձի ու հայացքների շուրջ թե՛ եկեղեցու ներսում և թե՛ դրսում: Նման զարգացումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված էր քրիստոնեական եկեղեցու դավանանքի վերաբերյալ արտահայտած նրա արմատական տեսակետներով: Նա առաջարկում էր մշակել քրիստոնեական նոր դավանանք, քանի որ ներկա դավանանքն արտահայտում է V դարի եկեղեցու համոզումը: Սա, իհարկե, կասկածի տակ էր դնում քրիստոնեական դավանանքի հայտնութենական բնույթը՝ Սուրբ Գրքի հեղինակությունը, եկեղեցու ավանդությունը: Այստեղ Ե. վրդ. Տեր-Մինասյանը, ըստ էության, կրում է գերմանական լիբերալ-աստվածաբանական դպրոցի վառ ներկայացուցչի՝ իր ուսուցչապետ Հառնակի ազդեցությունը: Վերջինս եկեղեցական դավանանքը դիտում էր քրիստոնեության հելլենականացման արդյունք, որից, նրա կարծիքով, պետք էր ազատագրել Քրիստոսի քարոզը: Հառնակն իր արմատականության պատճառով ընդունված չէր նույնիսկ բողոքական շրջանակներում, էլ ուր մնաց որ Երվանդ վարդապետի՝ «Հավատո հանգանակը» վերացնելու կոչն ընդդիմության կամ քննադատության չարժանանար Հայոց եկեղեցում, որը հնուց անտի հայտնի է

իր դավանանքի պահպանողականությամբ և քրիստոնեական եկեղեցու սրբազան ավանդության հանդեպ զարգացրած հատուկ վերաբերմունքով:

Թեև ստեղծված մթնոլորտը Ե. վրդ. Տեր-Մինասյանի համար հոգեբանորեն ճնշող էր, այնուամենայնիվ, նա շարունակում էր իր արդյունավետ գործունեությունը Մայր Աթոռում. տպարանի կառավարչի գործին զուգահեռ՝ Գևորգյան ճեմարանում կենտրոնանում է մասնավորապես ուսուցչության վրա: 1909 թ. նրա եկեղեցագիտական գործունեության մեջ հրատարակությունների առումով ևս բեղմնավոր էր. Գևորգյան ճեմարանի սաների համար լույս է ընծայում մեկ այլ դասագիրք: Խոսքը «Կրոնների պատմութիւն» աշխատության մասին է: Մյուս դասագրքերի նման այստեղ՝ առաջաբանում, ևս հեղինակը նշում է, որ ներկայացվող նյութը հիմնականում քաղվածք է վերջին շրջանի մասնագիտական ուսումնասիրությունների՝ հավանության արժանացած եզրակացություններից, ինչպես նաև հավելում՝ կրոնների պատմություն առարկան դասավանդելով՝ «տեսանք, որ պակասում է մի այնպիսի գիրք, թէ՛ հայերէն և թէ՛ ռուսերէն լեզուներով, որի մէջ ամփոփուած լինեն արդի գիտական ուսումնասիրութեան եզրակացութիւնները»: Այն իրողությունը, որ նույնիսկ ռուսերենով նման դասագիրք չկար, մի խոսուն վկայություն է՝ Հայոց եկեղեցու մտավորական սպասավորների անխոնջ և նախանձախնդիր ջանքերի շնորհիվ մեր հոգևոր-կրթական հաստատություններն իրենց գիտական մակարդակով XX դարասկզբին հավակնել են գերազանցել Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգևոր կրթարաններին: «Կրոնների պատմութեան» դասագրքի առաջաբանի վերջում Երվանդ վարդապետը նշում է, որ «այս ձեռնարկն էլ ոչ միայն Ճեմարանի ուսանողների համար է կազմուած, այլ ի նկատի ունի նաև առհասարակ բոլոր՝ կրօնների պատմութեամբ հետաքրքրուողներին»: Սա գալիս է հիմնավորելու մեր այն դիտարկումը, որ Երվանդ վարդապետն իր երկասիրություններով ցանկանում էր Հայոց եկեղեցում տեսնել կրոնապես կրթված քրիստոնյա հասարակություն: Այս մասին նա անդրադարձել է նաև 1908 թ. Հայոց եկեղեցու բարեփոխության թեմաներով «Արարատ»-ում հրատարակած հոդվածներում:

1909 թ. «Կրոնների պատմութեանը» հետևում է մեկ այլ կարևոր աշխատության հրատարակություն՝ «Յիսուսի կեանքը ու գործունէութիւնը»: Շարադրանքը հիմնված էր գերմանացի երկու նշանավոր աստվածաբան-նորկտակրանագետների՝ Պ. Շմիդտի և Ռ. Օտտոյի երկերի վրա: Այս աշխատությունը կարող էր Գևորգյան ճեմարանում Նոր Կտակարանի աստվածաբանության դասավանդման համար կատարել օժանդակ ձեռնարկի դեր: Նկատի ունենալով, որ Երվանդ վարդապետը ճեմարանի դասարանական բաժիններում ավանդում էր Ուսումն Սբ. Գրոց առարկան, հավանաբար, հիշյալ երկի ստեղծումը նույնպես պետք է նույնացնել ճեմարանում համանուն առարկայի հիմքերի ամրապնդման հետ: Գրքի ներածական բաժնում նա ընդհանուր գծերով ցույց է տալիս, որ վերջին շրջանում աստվածաշնչագիտության բնագավառում Նոր Կտակարանի գրքերը «խիստ քննադատության ենթարկվեցին պատմական, կրօնապատմական և լեզվաբանական գիտությունների միջոցներով և մեթոդներով»: Երվանդ վարդապետը, այնուհետև հիմնվելով պատմաքննաբանական մեթոդի վրա, շեշտում է Պողոս առաքյալի չորս մեծ թղթերի (Գաղատացիս, Ա և Բ Կորնթացիս և Հռոմեացիս) ու համատես Ավետարանների (Մարկոս, Մատթեոս

և Ղուկաս) աղբյուրագիտական նշանակությունը Հիսուսի պատմական կերպարի վերականգնման համար: Էջմիածնի Սինոդը, սակայն, գրաքննությամբ չխոչընդոտեց գրքի լույսընծայումը. այս հանգամանքը վկայում է, որ Երվանդ վարդապետի գործունեության համար մթնոլորտը, այնուամենայնիվ, նպաստավոր էր: Բանն այն է, որ գրքում օգտագործված մեթոդներին ու ներկայացված տեսակետներին տվյալ ժամանակաշրջանում խիստ վերապահությամբ էին մոտենում ավանդական եկեղեցիները՝ թե՛ Կաթոլիկ և թե՛ Ուղղափառ: Այն իրողությունը, որ Երվանդ վարդապետը կարողացել էր առանց խոչընդոտի նման աշխատություն հրատարակել Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տպարանում՝ միանշանակ խոսում է հօգուտ այն փաստարկի, որ Հայոց եկեղեցին լայնախոհ վերաբերմունք ուներ դեպի ուսումն ու գիտությունը, գիտական միտքն ու առաջընթացը: Դրանից բացի՝ շատ մտավորական հոգևորականներ քաջալերում էին Երվանդ վարդապետի եռանդը, ինչպես, օրինակ, ժամանակի նշանավոր մտավորական Մաղաքիա արքեպս. Օրմանյանը, Սուքիաս արքեպս. Պարզյանցը. վերջինիս անձնական հոգածությամբ է տպագրվել վարդապետի երկասիրությունների մի մասը:

Հիշյալ հրատարակությանը հաջորդում է մեկ այլ կոթողային նշանակության բնագրի լույսընծայումը, որը հայրաբանական գրականության համար մեծ կարևորություն է ներկայացնում: Խոսքը վերաբերում է II դարի նշանավոր քրիստոնյա մտածող Լիոնի եպիսկոպոս Իրինեոսի «Ընդդեմ հերձուածոց» աշխատության չորրորդ և հինգերորդ գրքերին: Նշված երկը ստեղծվել էր գնոստիկյանների դեմ եկեղեցու պայքարի արդյունքում՝ դառնալով եկեղեցական դավանանքի զարգացման պատմության ուսումնասիրության համար կարևոր վավերագիր: Ի տարբերություն իր ժամանակների շատ ջատագովների, որոնք անտեսում էին ավանդույթը, Իրինեոսը հիմնվում էր բացառապես քրիստոնեական ավանդության վրա: Նա ստեղծագործել է հունարեն, սակայն նրա գործերից ամբողջությամբ պահպանվել են երկուսը՝ լատիներեն և հայերեն թարգմանությամբ: Երվանդ վարդապետի առաջարկով Իրինեոսի «Ընդդէմ հերձուածոց» երկն իր ուսուցչապետ Հառնակի և գերմանացի հրատարակիչ Հինրիխսի հավանությամբ 1909 թ. լույս է ընծայվում Սբ. Էջմիածնի տպարանում, ապա տպագրված մամուլներն ուղարկվում են Լայպցիգ, որտեղ 1910 թ. հրատարակվում են “Texte und Untersuchungen” *ժողովածուում: Սա բարձր մակարդակի համագործակցություն էր ինչպես հայ և գերմանացի գիտնականների, այնպես էլ՝ հրատարակիչների միջև:*

Թեպետև Երվանդ վարդապետը Մայր Աթոռում շարունակում էր իր գիտակրթական առաքելությունը, սակայն, միևնույն ժամանակ խորհում էր հոգևոր ասպարեզից հեռանալու մասին: Բանն այն էր, որ նրա՝ եկեղեցու բարեկարգման վերաբերյալ գրած հոդվածները պատճառ էին դարձել, որ եկեղեցական և մտավորական որոշ շրջանակներ բացասական, կասկածամիտ վերաբերմունք ձևավորեն վերջինիս հանդեպ: Այսպիսի մթնոլորտը, բնականաբար, հոգեբանորեն ճնշող պիտի լիներ երիտասարդ վարդապետի համար: Մյուս կող-

մից, սակայն, եկեղեցական բարձրագույն իշխանությունը քայլեր էր ձեռնարկում Երվանդ վարդապետին հոգևոր ասպարեզում պահելու ուղղությամբ, ինչպես գրել նա «Հուշեր իմ կյանքից» (2005 թ.) գրքում:

1910 թ. փետրվարի 9-ին Ե. վրդ. Տեր-Մինասյանը Մատթեոս Բ կաթողիկոսին դիմում է ներկայացնում իրեն ազատելու Էջմիածնի միաբանությունից և դասելու Հայոց եկեղեցու աշխարհիկ հավատացյալների շարքը: Թեև նա հեռանում է եկեղեցականի ծառայությունից, սակայն ոչ երբեք եկեղեցուց:

Այնուհետև Ե. Տեր-Մինասյանը տարբեր ուսումնական հաստատություններում գլխավորապես զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1910 / 1911–1917 թթ. դասավանդել է Ալեքսանդրապոլի հայկական Արղության և առևտրական դպրոցներում, 1918–1919 թթ. Թբիլիսիի Հայոց ազգային խորհրդի անդամ և ուսումնական մասի վարիչ է եղել: 1919–1920 թթ. Երևանում և Ալեքսանդրապոլում պաշտոնավարել է որպես համալսարանների պրոֆեսոր, իսկ 1920–1921 թթ.՝ Վաղարշապատի II աստիճանի դպրոցի և մանկավարժական տեխնիկումի ուսուցիչ ու վարիչ: Այս ընթացքում գործուն թղթակցել է տարբեր թերթերի («Ախուրյան», «Հայրենիքի ձայն»)՝ իր հայագիտական և աստվածաբանական արժեքավոր աշխատություններով հարստացնելով մամուլի էջերը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921 թ., երբ հիմնվում է Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտը, Ե. Տեր-Մինասյանը դառնում է նրա առաջին գիտական քարտուղարը՝ աշխատելով 2 տարի: Նրա անմիջական նախաձեռնությամբ հիմնադրվում է «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» հանդեսը, որի շուրջ են համախմբվում ժամանակի լավագույն գիտնական-մտավորականները: Նրա հեղինակությամբ հանդեսում լույս են տեսնում հայագիտական նշանակություն ունեցող «Աբրահամ Խոստովանողի «Վկայք Արևելից»-ը և նրա աստվածաբանական սկզբնատիպը» հոդվածը և մի քանի գրախոսականներ («Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի», 1921–1922 թթ.): 1930–1931 թթ. նա նշանակվում է Երևանի մանկավարժական տեխնիկումի և Գյուղատնտեսական ինստիտուտի գերմաներենի դասախոս: Մանկավարժական տեխնիկումում Ե. Տեր-Մինասյանը պաշտոնավարում է միայն մեկ ուսումնական տարի, իսկ Գյուղատնտեսական ինստիտուտում՝ 17 տարի (1930/31–1946/47 թթ.), որից 2 տարի՝ միայն իբրև գերմաներենի դասախոս, իսկ 15 տարի՝ նորաստեղծ լեզուների ամբիոնի վարիչ և գերմաներենի դասախոս:

Մանկավարժական աշխատանքին զուգահեռ՝ Ե. Տեր-Մինասյանը չի դադարում հայագիտության հարցերով զբաղվել, և, հատկապես, այնպիսի կարևոր հարցերով, որոնք վերաբերում էին հայ Ոսկեդարին ու նրա վառ ներկայացուցիչներին: Այս շրջանում միտում կար վերանայման V դարի նշանավոր գործիչներին վերաբերող մոտեցումները՝ տարբեր մեկնաբանություններից ազդված կամ թե նոր մոտեցումներ առաջ բերելու մղումով: Ե. Տեր-Մինասյանը, լինելով պատմաքննադատական մեթոդի կողմնակից հետազոտող, միևնույն ժամանակ այն խորը համոզմանն էր, որ ցանկացած գիտական տեսակետ պիտի հաշվի առնի պատմական աղբյուրները, պիտի դրանց համեմատական քննության վրա հիմնվի: Այս իմաստով 1943 թ. հատկապես մի քանի արժեքավոր հոդվածներ է հրատարակում նա՝ ի պատասխան նոր մեկնիչների՝ «Եղիշե Վարդա-

պետի «Վարդանանց պատմության» նորագույն քննադատը», Եղիշեի «Վարդանանց պատմության» մասին եղած քննությունների շուրջը», «Մովսես Խորենացու քաղկեդոնական լինելու առասպելի շուրջ»:

1943–1944 թթ. առանց պաշտպանության Ե. Տեր-Մինասյանին տրվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան:

Ե. Տեր-Մինասյանի կենսագրության մեջ մասնավորապես առանձնանում է նաև 1946 թ., երբ լույս է տեսնում նրա «Ոսկեդարի հայ գրականությունը» գրքույկը: Վերջինիս շուրջ մեծ աղմուկ են բարձրացնում կոմունիստական գաղափարախոսները՝ մեղադրելով նրան անցյալը իդեալականացնելու մեջ: Բնականաբար չարժե անդրադառնալ այդ անհեթեթ մեղադրանքին: Միևնույն ժամանակ պետք է նկատել, սակայն, որ անցյալը միջնադարյան կղերաֆեոդալական եզրույթով բնութագրողներին, և այդ անցյալը համապատասխանաբար չճանաչողներին կամ թե այն մերժողներին, բնականաբար, դուր չպիտի գային Ե. Տեր-Մինասյանի մեկնաբանությունները հայ ոսկեդարյան գրականության և դրանց ստեղծողների վերաբերյալ: Ե. Տեր-Մինասյանի անձի շուրջ տեղի ունեցող այս զարգացումները, թերևս, ոմանք իշխող վարչակարգի և վերջինիս որդեգրած քաղաքականության հետ կապեն: Այս վարկածը ոմանք կարող են զարգացնել այն լույսի ներքո, որ Ե. Տեր-Մինասյանը տվյալ ժամանակաշրջանի կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպս. Զորեքչյանի հետ սերտ հարաբերությունների մեջ էր: Իհարկե, բավարար հիմքեր չկան այս տեսակետը պնդելու, սակայն, չի բացառվում, որ խորհրդային վարչակարգի գաղափարական առաջնորդները ինչ որ բան նկատելով, որոշել էին արձագանքել նախկին վարդապետին՝ փորձելով այդկերպ հեռու պահել վերջինիս եկեղեցական միջավայրից: Մանավանդ, որ կաթողիկոսական տեղապահը խոսք էր բացել Ե. Տեր-Մինասյանին վերստին եկեղեցական ասպարեզ վերադարձնելու մասին՝ ինչպես տեղեկանում ենք վերջինիս «Հուշերից»:

1946 թ. Ե. Տեր-Մինասյանը գրաբարից աշխարհաբարի է վերածում և հրատարակում հայ ոսկեդարյան գրականության լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ Եղիշեի կարևորագույն գործը՝ «Վարդանանց Պատմությունը», թարգմանությամբ, ներածական ուսումնասիրությամբ և ծանոթագրություններով: Սույն աշխատության քննական ընագիրն ուսումնասիրողը գիտական հանրության դատին է ներկայացնում 1957 թ.:

1943/44–1947/48 ուս. տարիներին Ե. Տեր-Մինասյանը Երևանի պետհամալսարանում պաշտոնավարում է որպես օտար լեզուների ամբիոնի վարիչ և գերմաներենի պրոֆեսոր: 1948/49–1949/50 թթ. ուս. տարիներին նա «Ոսկեդարի հայ գրականությունը» զեկուցման պատճառով չէր աշխատում, իսկ 1950–1951 թթ. ուս. տարվանից կարողանում է վերականգնել իր դասախոսական իրավունքները և 1959–1960 թթ. ուս. տարվա վերջը կես դրույքով պաշտոնավարել Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում և պետական համալսարանում: Նրա մանկավարժական գործունեության վերջին տարին եղավ 1963–1964 ուս. տարին Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում:

Սկսած հիշյալ տարեթվից՝ Ե. Տեր-Մինասյանը թողնում է մանկավարժական աշխատանքը և գիտական գործունեության անցնում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Այս շրջանում նույնպես մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ և բնագրեր են հրատարակության պատրաստվում Երվանդ Տեր-Մինասյանի աշխատասիրությամբ, ինչպես, օրինակ՝ «Վերջին անգամ Ն. Ակինյանն ու Եղիշեի «Վարդանանց Պատմությունը», «Եղեսիայի ժամանակագրությունը», «Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից» և այլն:

Ե. Տեր-Մինասյանը նաև թարգմանական և խմբագրական լուրջ աշխատանք է ծավալել ՀՍՍՀ պետհրատում և կուսհրատում (համապատասխանաբար՝ 47 անուն գիրք տարբեր լեզուներով և ավելի քան 15 աշխատանք): Նա թարգմանել է մարքսիզմ-լենինիզմի դասականների շատ գործեր, որոնք ինքն էլ խմբագրել է կամ մեկ առ մեկ համեմատել գերմաներեն բնագրերի հետ: Թարգմանական երկերի բնույթը, իհարկե, պայմանավորված էր ժամանակաշրջանի տիրող գաղափարախոսությամբ: Հայագիտությունը մեծապես կշահեր, եթե Ե. Տեր-Մինասյանին թույլատրվեր թարգմանել նաև գերմանացի այլ մտածողների, փիլիսոփաների և գիտնականների գործեր: Նրա գիտական պատրաստվածությունը լիարժեքորեն կբավարարեր նման ծրագիր իրագործելու համար: Ե. Տեր-Մինասյանը ծավալուն աշխատանք է տարել նաև բառարանների կազմման և խմբագրման ոլորտում (նրա աշխատանքների ընդհանուր թիվը կազմում է 135 անուն գիրք):

Գիտական հասարակությունը բարձր գնահատանքով է արտահայտվել Տեր-Մինասյանի գիտական և մանկավարժական գործունեության մասին և բազմիցս շնորհակալագրեր ուղղել նրան. ավելին, հանդիսավոր նշել է նրա ծննդյան 80 և 90-ամյա, ինչպես նաև՝ գիտական և մանկավարժական գործունեության 60 և 70-ամյա հոբելյանները:

ՀՍՍՀ գերագույն խորհրդի նախագահությունը 1964 թ. նրան շնորհել է «Հայկական ՍՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ» կոչում: ՀՍՍՀ լուսավորության նախարարությունը ժողովրդական կրթության բնագավառում կատարած բեղմնավոր աշխատանքի համար 1968 թ. նրան պարգևատրել է «Խաչատուր Աբովյան» շքանշանով: Ե. Տեր-Մինասյանը «գիտական երկարամյա բարեխիղճ և անբասիր աշխատանքի համար» արժանացել է նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահության պատվոգրերի, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը նրան շնորհել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշան:

Ե. Տեր-Մինասյանը ստացել է նաև կառավարական պարգևներ. Հայրենական Մեծ պատերազմի ավարտի կապակցությամբ՝ «За доблестный труд» *շքանշան և «Լենին» հուշամեդալ՝ ծննդյան 100-ամյակի կապակցությամբ և վերջապես ծննդյան 90-ամյակի և գիտական ու մանկավարժական գործունեության 70-ամյակի կապակցությամբ ՍՍՀՄ կառավարությունը նրան շնորհել է «Աշխատանքային կարմիր դրոշ»-ի բարձր շքանշանը:*

Միևնույն ժամանակ տեղին է նկատել, որ դեռևս անտիպ են մնում նրա կողմից ստեղծված դասագրքեր, հոդվածներ և այլ աշխատություններ: Ուրախությամբ պետք է արձանագրենք, որ 2014 թ. Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տպարանը նրա անտիպ աշխատություններից հրատարակեց «Հայոց Եկեղեցին», որը

ի դեպ, լայն արձագանք գտավ ինչպես Հայոց եկեղեցու պատմությամբ զբաղվողների, այնպես էլ ընթերցասեր հանրության կողմից: Սբ. Էջմիածնի տպարանը 2009 թ. վերահրատարակել է նրա «Հայ Եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ մինչեւ Զ դարի վերջը» ուսումնասիրությունը, իսկ 2013 թ. «Ընդհանուր Եկեղեցական Պատմութիւն, հատոր Ա, Հին Եկեղեցին»: 2011 թ. «Արարատի ժառանգություն» շարքով հրատարակվել է նաև Ե. վրդ. Տեր-Մինասյանի հոդվածներն ու թարգմանությունները՝ ժամանակին տպագրված «Արարատ» ամսագրում: Ե. Տեր-Մինասյանի անձի և ստեղծած ժառանգության հանդեպ այս հետաքրքրությունը, բնականաբար, խոսում է այն մասին, որ այսօր էլ նրա արտահայտած տեսակետները, որդեգրած մոտեցումները, արված դիտարկումներն արդիական են մնում և՛ ասորագիտության, և՛ հայագիտության տարբեր ոլորտների համար:

Ե. Տեր-Մինասյանի վաստակը գնահատվել է որպես խոշոր ավանդ մեր մշակույթի պատմության գանձարանում: Նա իր մահկանացուն կնքել է 1974 թ. հուլիսի 12-ին:

Տ. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆ

Պ. գ. թ. (ԵՊՀ), փ. գ դ. (Դարեմի համալսարան, Մեծ Բրիտանիա), Մասյացոտնի թեմի առաջնորդ: Գիտական հետաքրքրություններ՝ Հայ եկեղեցու պատմություն, աստվածաբանություն, դավանանք: